ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N 1523-Ա « 23 » մարտի 2026թ.

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ստյոպա Ափանոսյան» ՍՊԸ-ի լ/ա Գրիգոր Ափանոսյանի դիմումը՝ Սայաթ-Նովա թաղամասի հ.4 հասցեում գտնվող թ.730 օբյեկտի զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հատակագիծ թողարկելու վերաբերյալ:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել 29.01.1996թ. սեփականության 44686 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-28122023-99-0301, հ.ԱՏ-10072024-01-1153, հ.ԱՏ-07022024-01-1192 տեղեկանքները:

Քննարկվող հողամասը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գոտում:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Սայաթ-Նովա թաղամասի հ.4 հասցեում շինությամբ ծանրաբեռնված հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 197,7քմ:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների մեջ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում /ծածկագիր՝ 01-002-0007-0002/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ և 64-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ. Դ-9380-26 եզրակացությունը և 13.03.2026թ հ, Ն/14475-26 գրությունը.

1. Վերականգնել Սայաթ-Նովա թաղամասի հ.4 հասցեում գտնվող շինությամբ ծանրաբեռնված հողամասի հողհատկացման հիմքերը՝ 197.7քմ մակերեսի չափով:

2. Սայաթ-Նովա թաղամասի հ.4 հասցեում գտնվող՝ 197.7քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Սայաթ-Նովա թաղամասի հ.4 հասցեում գտնվող 197.7քմ մակերեսով (01-002-0007-0002 կադաստրային ծածկագրով) հողամասի նպատակային նշանակությունը (կատեգորիան) սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը (օգտագործման նպատակը)՝ հասարակական կառուցապատման:

4. Սահմանել, որ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ սույն որոշման 1-ին կետում նշված 197.7քմ մակերեսով հողամասն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է «Ստյոպա Ափանոսյան» ՍՊԸ-ին:

5. Տեղեկացնել հողօգտագործողին, որ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետում ամրագրված դեպքերում պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը:

6. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության ու անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

9. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ